Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Հովիկ Շառյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր ակնարկ կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառման մասին։……5

1.1Ինչու է կարևոր դասի պլանավորումը……5

1.2 Ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները։……8

1.3 Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում։……10

Գլուխ 2 Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը ՆԶՊ առարկայի օրինակով։……10

Եզրակացություն……20

Գրականության ցանկ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ոչ մի դաստիարակ չպետք է մոռանա, որ նրա ամենագլխավոր պարտականությունը սաներին մտավոր աշխատանքին վարժեցնելն է և որ այդ պարտականությունն ավելի կարևոր է, քան բուն առարկայի դասավանդումը:

Կոնստանտին Ուշինսկի

Դասն ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև:Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում դերդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն,միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեության և դրանցից բխող դիդակտիկ տարրեր: Դասի արդյունավետության հետ կապված մտահղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է դասի ամենօրյա պլանավորումը,որի բաղադրիչներն են՝ դասի թեման, նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական), տեսակը(նոր նյութի յուրացման,ամրապնդման,գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգման,յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման),հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխումը,հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում,օրինակների ներկայացում,որոնցում կիրառված են այդ հասկացություն,ները,հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում,էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում), դասավանդման մեթոդները՝ բանավոր կամ գրավոր: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել,որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը:

Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ:Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել , որ բոլոր աշակերտները ի զորու լինեն դրանք կատարել,այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝ դասի սկզբի կազմակերպումը, գիտելիքների , կարողությունների և հմտությունների բացահայտումը,աշխատանք ուսումնասիրող նյութի հետ, ծանոթացում նոր նյութի հետ, գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում, գիտելիքների համակարգում և ընդհանրացում, տնային աշխատանքի կազմակերպում:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել,կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ,սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում :

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. ՆԶՊ առարկայի շրջանակներում գործնականում կիրառել կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդներ և մոդելներ:

3. Կատարել արդյունքների ամփոփում, կազմել վերլուծություն, եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ դասավանդման ընթացքում խիստ կարևոր է կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը, քանի որ այն զգալիորեն բարձրացնում է ուսումնառության որակը:

Հետազոտության մեթոդներն են՝ զրույց-քննարկում, համեմատում, դիտում, փաստաթղթերի ուսումնասիրում:

Հետազոտության ընտրանք՝ 8-9-րդ դասարանի աշակերտներ :

ԳԼՈՒԽ 1. Ընդհանուր ակնարկ կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառման մասին:

1.1.Ինչու՞ է կարևոր դասի պլանավորումը

Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ: Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: §Ուսուցման մեթոդը՝ բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՛նչ սովորեցնել/ կրթության բովանդակություն/, ինչի՝ համար սովորեցնել/ կրթության նպատակներ/ և ի՛նչպես սովորեցնել/ ուսուցման մեթոդիկա/: Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Մեթոդը, հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկ, իրար է կապում ուսուցման նպատակը և վերջնական արդյունքը: Ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

_ ինչպես հաջող պլանավորել

_ ինչպես հաջող իրականացնել դասը

_ ինչպես կանխատեսել արդյունքները

_ ինչպես վերլուծել հաղողություններն ու բացթողումները

_ ինչպես ձևավորել հաղորդակցական կարողություններ

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա

մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը; Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է աշակերտների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները; Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները: ՈՒսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: ՈՒսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Լ. Վիգոտսկին գրել է. << Ուսուցման ամենատարածված ձևերն ու ակտիվ մեթոդներն են>>՝

1. Պատմել /դասախոսություն/

2 . Բացատրություն-վերլուծություն

3. Թեստային աշխատանք

4. Աշխատանք դասագրքով և լրացուցիչ գրքով / սկզբնաղբյուր/

5. Զրույց-Բանավեճ-Հիմնավորում

6. Համակարգիչով դասի անցկացում/պրեզենտացիա/ և նյութերի ցուցադրում

7. Դասի մոդելավորում կամ սխեմայի կազմում/ քարտեզագրում/

8. Գրավոր աշխատանք-համառոտագրում

9. Գործնական աշխատանքներ

10. Ինքնուրույն աշխատանքներ

11. Վարժություններ/ աղյուսակներ, Վենի դիագրամմա, Տ-աձև աղյուսակ և այլն/

12. Խմբային աշխատանք

13. Ցուցադրում-իլյուստրատիվ մեթոդ

14.Դերային խաղ

15. Դասի կրկնություն

1.2. ՈՒսուցման ավանդական և ժամանակակից մեթոդներ

Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է /metodos/, որը բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ մի տեղ տանող ուղի, ճանապարհ նպատակին հասնելու համար: Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Մասնագիտական գրականության ընդունված և տարածված են մեթոդի հետևյալ սահմանումները.

_ ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակ՝ ուղղված կրթության բովանդակության յուրացմանը.

_ ուսուցման այնպիսի ձև, որ կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա.

_ ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոց.

_ ուսուցման գործընթացում ուսուցչի և սովորողի միջև փոխազդեցություն արտացոլող մոտեցումների ու հնարների համախումբ, ուսուցչից դեպի աշակերտը գնացող մտքի ճանապարհ.

_ սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա.

_ որևէ տիպի խնդիրների լուծման անհրաժեշտ գործողությունների վերջավոր, կարգավորված բազմություն:

Սահմանուների բազմազանության մեջ նկատելի են որոշակի ընդհանրություններ: Այսպես, օրինակ, համարյա բոլոր սահմանուներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց կամ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն: Եթե փորձենք ևս մեկ անգամ բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի և աշակերտի համագործակցությունն է՝ուսումնական նպատակներն իրականացնելու համար: Այսպիսով՝ ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Բայց մեթոդների իմացությունը բավարար չէ ուսուցումը արդյունավետ իրականացնելու համար: Շատ կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունն ու կիրառելու կարողությունը: Մեթոդների ընտրելու ու կիրառելու կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով.

_ սովորողը պետք է հստակ իմանա ինչ է անում և ինչու

_ սովորողը պետք է միշտ տեղյակ լինի ինչ է իրենից պահանջվում

_ սովորողը պետք է վստահ լինի, որ ուսուցիչն աջակցելու և օգնելու է

_ ուսուցիչը պետք է կարողանա համադրել բազմազան մեթոդները նույնքան բազմազան արդյունքների հետ:

Մեթոդի բաղկացուցիչ մասն է կազմում հնարը: Եթե մեթոդը ուսումնական նպատակը տանող ճանապարհն է, ապա մեթոդական հնարները ընթացքում հանդիպող խնդիրները լուծելու, դժվարությունները հաղթահարելու միջոցներ են:

Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն մեթոդը հնարների ամբողջություն է:

Ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

1.3. Ժամանակակից մեթոդների դերը դասի պլանավորման տարբեր փուլերում

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- Աշակերտը նյութը սովորում է ինչ որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի.
- Աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը.
- Աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար.
- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ.
- Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը.
- Ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Գլուխ 2 Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը ՆԶՊ առարկայի օրինակով:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն

մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Մենք դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

դասի սկիզբ,

նոր նյութի բացատրություն,

սովորածը պարզելու հնարներ:

2.1 ԴԱՍԻ ՍԿԻԶԲ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

1. Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.



2. Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը:

Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:

3. Զարմանք, անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով:

4. Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես հասարակագիտության դասերին՝

Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է… Երվանդ Քոչար

Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում:

5. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը:

Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:



6. Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: **7. Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն**

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

2.2 ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան
սովորել:

Ըստ գիտական հետազոտությունների՝

Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը:

Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա:

Շատ կարևոր է նախադասությունների չափը:

Խորհուրդ է տրվում

Օրինակ՝ լավ կլինի երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախադասություն: Հետո միջին չափի նախադասություն: Մի քանի երկար նախադասությունների հաջորդումը կարող է դժվարացնել աշակերտների ուշադրության կենտրոնացման գործընթացը:

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Կենտրոններով աշխատանք

Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Կենտրոններ.

- հետազոտողների կենտրոն
- ստեղծագործողների կենտրոն

- գրավոր աշխատանքի կենտրոն

- բացահայտողների կենտրոն

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն

Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն:

Գրավոր աշխատանքի կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:



Ուսումնական նյութը մատչելի դարձնելուն շատ են օգնում դիդակտիկ պարագաները և նյութերը՝ այն ամենը, ինչը ակադեմիական կրթությունը մոտեցնում է կյանքին:

2.3 Սովորածը պարզելու հնարներ

1. Ֆրայերի մոդելը

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:



2. Գիտելիքի դոմինո

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 - Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի ու ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ, հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ուսուցման մեթոդները

Ռազմահայրենասիրական դաստիարակության նյութի վերլուծության ժամանակ օգտագործում ենք ուսուցման տարբեր մեթոդներ, մասնավորապես՝ բանավոր շարադրանք, զրույց, վարժություններ /մարզումներ/, ինքնուրույն աշխատանք:

Բանավոր շարադրանք

Դասախոսությունը շարադրվող նյութի գիտա-տեսական վերլուծության ծավալուն հաղորդումն է: Դասախոսության հիմնական նպատակն է օգնել սովորողներին, նրանց հետագա ստեղծագործական աշխատանքին: Դասախոսության մեջ շարադրվում են թեմայի առավել բարդ դրույթները, վերլուծվում են գրական աղբյուրները, տրվում են խորհուրդներ հետագայում նպատակասլաց թեմայի հետ աշխատելու համար:

Բացատրությունները դրանք երևույթների իմաստնի բացահայտումն են: Դրանցում մեծ տեղ ունեն ապացույցները, հետևությունները, դատողությունները: Բացատրություններն ուղեկցվում են սպառազինության ու տեխնիկայի ցուցադրմամբ, դիդակտիկ պարագաների, գործողությունների ու հնարքների ցուցադրմամբ:

Պատմումը ուսումնական նյութի կարճ ու պատկերավոր շարադրումն է, առավելապես փաստացի տվյալների հիման վրա: Պատմելու ընթացքում կիրառվում են նկարագրության, դատողությունների, եզրահանգումների ձևերը: Սովորաբար տևողությունը լինում է 20-30 րոպեից ոչ ավել, ուղեկցվում է բացատրություններով, դիդակտիկ նյութերի ցուցադրումով:

Զրույցը սովորողներին նոր գիտելիքներով հարստացնելու պարզ ու մատչելի մեթոդներից է: Այն հնարավորություն է ընձեռնում ուսումնական նյութի քննարկման համար, թույլ է տալիս ստուգել նախկինում ձեռք բերած գիտելիքները, դրանք սիստեմավորել և խորացնել: Ուսուցման նպատակից կախված զրույցը կարող է լինել ծավալուն, ստուգողական, նոր գիտելիքների հաղորդման: Այն պետք է նախօրոք նախապատրաստել, որոշել նպատակը, խնդիրները բովանդակությունը:

Վարժությունները /մարզումներ/ գիտակցաբար, աստիճանաբար դժվարացող որոշակի գործողությունների, հնարքների կրկնությունն է, սովորողների մոտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու նպատակով: Վարժություններ կատարելիս սովորողները ձեռք են բերում գործնական ունակություններ զենքի, սապառազինության, մարտական տեխնիկայի հետ վերաբերվելու:

Գործնական աշխատանքը տեխնիկայի, սպառազինության, զենքի հետ վարվելու, սպասարկելու, խնամելու և պահպանելու կոնկրետ և կարևոր աշխատանք է: Ինքնուրույն աշխատանքը ուղեկցվում է հրահանգների, ուղեցույցների, տեղեկատու գրականության կրկնությամբ: Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը մեծ չափով կախված է զինղեկի կողմից այն նախապատրաստելու մակարդակից, դրված խնդիրների ծավալից և նրա կողմից իրականացվող հսկողությունից: Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են ուսուցման մեթոդները զուգորդված, որի ժամանակ կիրառվում են մի քանի մեթոդներ:

Վերջինիս էությունը արտացոլող արժեքներից է նաև հայրենասիրությունը:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային-էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով ուղղորդվող կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մտածելակերպով, ազգային ինքնագիտակցությամբ, հարատևման ի վերուստ տրված հրամայականով: Հայրենասիրության բարձր մակարդակի դրսևորման հասնելն ու պահպանելը բավական բարդ ու աշխատատար գործընթացների առնչվող խնդիր է:

Հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է որպես հոգևոր-բարոյականի հաստատմամբ առավել սոցիալականացված զգացմունք: Այն՝ որպես իր բնույթով խորապես սոցիալական երևույթ, ոչ միայն հասարակական կյանքի որոշակի կողմ է, այլև դրա գոյության և զարգացման էական աղբյուր: Հայրենասիրության առաջնահերթ սուբյեկտը անհատն է, որի գերակա սոցիալ-բարոյական խնդիրն է իր հայրենիքին պատմական, մշակութային, ազգային և հոգևոր պատկանելության գիտակցումը՝ որպես կյանքի իմաստն ու բովանդակությունը որոշող բարձրագույն սկզբունք: Հայրենասիրության իմաստը հոգևոր արժեքայնության մեջ է: Այն՝ որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

Ընդհանրացնելով այս մտքերը՝ կարող ենք ասել, որ հայրենասիրությունը հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների մի համակարգ է, որը անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն է ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը՝ դրսևորվելով ինքնաիրացման ակտիվ գործընթացում, որ ծավալվում է ի շահ Հայրենիքի բարօրության:

Հայրենասիրության օբեյկտը միանշանակ թանձրացված հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ : Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը , դասակարգը, ազգը և այլն: Այստեղ երևան է գալիս հայրենասիրությունն ու սուբեյկտը մեկ հարթության բերող և իրար շաղկապող գործառույթի անհրաժեշտությունը հայրենասիրական,մասնավորապես՝ռազմահայրենասիրական դաստիարակություն անվամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մանրամասնորեն ուսումնասիրելով կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը և գործնականում փորձարկելով դրանք, եկանք այն եզրահանգմանը, որ արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը խիստ կարևոր է, քանի որ այն զգալիորեն բարձրացնում է սովորողների ուսումնառության որակը:

Ուսուցիչն իր համար պետք է հստակեցնի դասը, նրա խնդիրները: Յուրաքանչյուր դաս կարող է ունենալ մի քանի խնդիրներ: Նրանք պետք է լինեն կոնկրետ: Ուսուցիչը դասի համար պետք է նախատեսի այնպիսի խնդիրներ, որոնք աշակերտներին կտանեն մտածողության տարբեր տեսակետների միջոցով՝ ինֆորմացիայի տիրապետում, կյանքում դրանց կիրառում: Դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչը նախքան նոր նյութին անցնելը պետք է վեր հանի աշակերտի նախնական գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, իսկ եթե այդ գիտելիքները բավարար չեն, որոշակի բացատրություններ տա, ապա անցնի դասանյութին: Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է հստակեցնի գնահատման խնդիրը: Գնահատման համար ուսուցիչը պետք է ստանա ապացույցներ, որ աշակերտները՝

ա) Յուրացրել են դասանյութի բովանդակությունը.

բ) Ձեռք են բերում մտածողության և սովորելու համապատասխան փորձառություն:

Գնահատումը կարող է իրականացվել դասին զուգահեռ, նրա տարբեր փուլերում և ոչ թե միայն վերջում, ինչպես դա արվում է ավանդաբար: Սովորողների գիտելիքների գնահատման մասին որոշումները ներառում են՝ դասավանդման կառավարումը, սովորողներին կրթական տարբեր ծրագրերում ներառելը, նրանց համապատասխան կարգեր տալը, ուղղորդելը, խորհուրդներ տալը, կրթական հնարավորությունները բացահայտելը, ինչպես նաև նրանց իմացությունը հավաստագրելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտին Բարեթ, Լուիզ դե Բիվար, Բլեք Մայքլ Բիրամ և ուրիշներ, Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Կիրառական ուղեցույց, Հատոր 3, 165 էջ,

2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.:

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:

3. kznakgnahatum.blogspot.com

4. innostud.am

5.https://rm.coe.int/arm-referenceframework-vol-3/1680a1b758/30/12/2017: